Հաստատվել է
Հյուսիսային համալսարանի
ուսումնամեթոդական խորհրդի նիստում
/արձ.№ 10 , հունիսի 14 /

Ուսումնամեթոդական խորհրդի նախագահ

Ռեկտոր _____ Բ.Մ.Մակիչյան

ԿԱՐԳ

Հյուսիսային համալսարանի «Տարվա լավագույն ամբիոն» անվանակարգի շնորհման

I. Ընդհանուր դրույթներ

Անվանակարգի շնորհման նպատակը

«Հյուսիսային համալսարանի տարվա լավագույն ամբիոն» անվանակարգը սահմանվում է համալսարանի ամբիոնների գործունեությունը ակտիվացնելու, ամբիոնների պրոֆեսորա-դասախոսական կազմի ուսումնամեթոդական, գիտահետազոտական, ուսանողների շրջանում դաստիարակչական աշխատանքը խրախուսելու նպատակով:

Անվանակարգի շնորհման խնդիրներն են.

- կրթության որակի բարձրացում,
- բուհի ղեկավարության կողմից ամբիոնների գործունեության վերաբերյալ օբյեկտիվ տեղեկատվության հավաքագրում,
- ուսումնական գործընթացի կատարելագործում և արդյունավետության բարձրացում, դասավանդման նոր տեխնոլոգիաների ներդրում,
- ամբիոնների դասախոսների ներգրավում ներբուհական մրցակցության մեջ,
- ամբիոններում ուսումնամեթոդական աշխատանքի կատարելագործում և նյութա-տեխնիկական բազայի ամրապնդում,
- ամբիոնների աշխատանքի դրական փորձի տարածում:

Մրցույթի կազմակերպումը

Մրցույթը կազմակերպվում է մինչև համալսարանի օրը /հուլիսի առաջին շաբաթում/: Մինչ այդ ուսումնական վարչության կողմից հրապարակվում են ամբիոնների գործունեության մշտադիտարկման արդյունքները:

«Հյուսիսային համալսարանի տարվա լավագույն ամբիոն» անվանակարգը շնորհվում է բուհի ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ:

Լավագույն ամբիոն ճանաչվում է համալսարանի այն ամբիոնը, որը տվյալ ուսումնական տարում ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործընթացի, արտալսարանային և դաստիարակչական աշխատանքների կազմակերպման ուղղությամբ առավելություններ ունի մյուս ամբիոնների համեմատությամբ:

Ամբիոնի աշխատանքի ներբուհական հաշվետվության ցուցանիշները Հյուսիսային համալսարանում հետևյալն են.

- ամբիոնի դասախոսների թվում գիտական կոչումներ և կրթական աստիճաններ ունեցողների տեսակարար կշիռը,
- ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից հրատարակված ուսումնա-մեթոդական և գիտական աշխատությունների քանակը,
- ամբիոնի դասախոսներին տրվող ուսանողների գնահատականների միջին բալը,
- առարկայական ծրագրերի համապատասխանելիությունը որակի ապահովման արդի պահանջներին,
- ամբիոնի դասախոսների կողմից դասավանդման նորագույն տեխնոլոգիաների կիրառման աստիճանը,
- լսարանային և արտալսարանային աշխատանքների որակն ու քանակը,
- ուսանողների շրջանում հայրենասիրական, ազգային և համամարդկային արժեքների ամրապնդմանը նպաստող միջոցառումների առկայությունը: